Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 15-ի N 1800 - Ա որոշման

Ս Խ Ե Մ Ա

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՈՒԼՆԵՑԻ-ՌՈՒԲԻՆՅԱՆՑ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ 2.5 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 15-ի N 1800 - Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱ-ՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գործարք 1. Երևան քաղաքի Ուլնեցի-Ռուբինյանց փողոցների միջև ապամոնտաժված 2.5 կմ երկարությամբ երկաթուղային գծին հարակից հատվածում գտնվող 1.4201 հեկտար հողամասի տարաժամկետ վճարումով առուվաճառք

Վաճառողը	Երևան համայնք
Գնորդը	Կազմակերպություն
Առարկան	Հողատարածքի տարաժամկետ վճարումով վաճառքի պայմանագրի կնքում՝ առնվազն 3 առանձին հողակտորների տեսքով՝ ընդհանուրի 20%, 30% և 50% մասնաբաժինների շրջանակներում
Պայմանագրի գինը	I n I դրամ՝ առանց ԱԱՀ-ի (հարկման օբյեկտ չէ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետ), հավասար է հողամասերի շուկայական արժեքին
Պայմանագրի կնքման և գնի վճարման ժամկետը	Հողատարածքի տարաժամկետ վճարումով վաճառքի պայմանագիրը կնքվում է հետևյալ պայմաններով՝ 1) շինարարական աշխատանքների ծավալի 30%-ը իրականացնելուց հետո, որը փաստագրվում է համապատասխան կատարողական ակտով, կազմակերպությունը վճարում է հողատարածքի (ամբողջ պայմանագրային գնի) 20%-ի արժեքը, որը Երևանի քաղաքապետարանն անմիջապես հետ է փոխանցում կազմակերպությանը՝ որպես վճարում շինարարական աշխատանքների դիմաց, և կազմակերպությանը տրամադրում է տեղեկանք հողամասի այդ հատվածի տարաժամկետ վճարումը ավարտված լինելու մասին. 2) շինարարական աշխատանքների ծավալի ևս 40%-ը իրականացնելուց հետո, որը փաստագրվում է համապատասխան կատարողական ակտով, կազմակերպությունը վճարում է հողատարածքի (ամբողջ պայմանագրային գնի) 30%-ի արժեքը, որը Երևանի քաղաքապետարանն անմիջապես հետ է փոխանցում կազմակերպությանը՝ որպես վճարում շինարարական աշխատանքների դիմաց և կազմակերպությանը տրամադրում է տեղեկանք հողամասի այդ հատվածի տարաժամկետ վճարումն ավարտված լինելու մասին.

	3) հողատարածքի (ամբողջ պայմանագրային գնի) մնացած 50%-ի արժեքը կազմակերպությունը վճարում է կապալի պայմանագրով շինարարության ավարտի փաստագրման ավարտական ակտի հաստատման օրվանից 10 օրվա ընթացքում, որը Երևանի քաղաքապետարանն անմիջապես հետ է փոխանցում կազմակերպությանը՝ որպես վճարում (վերջնահաշվարկ) շինարարական աշխատանքների դիմաց և կազմակերպությանը տրամադրում է տեղեկանք հողամասի ամբողջ մնացած հատվածի տարաժամկետ վճարումն ավարտված լինելու մասին:
Պայմանագրով հողի սեփականության իրավունքի փոխանցումը	Հողատարածքի տարաժամկետ վճարումով վաճառքի պայմանագրի գնի համապատասխանաբար 20%, 30% և 50% մասնաբաժինների վճարումից հետո՝ 30 օրվա ընթացքում
Նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման ծախսերը	Կազմակերպության հաշվին
Հատուկ պայման	Երևան համայնքը պարտավորվում է հողատարածքի տարաժամկետ վճարումով վաճառքի պայմանագրի կնքումից հետո մեկ ամսվա ընթացքում տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ պայմանով, որ կառուցման նախագծի համաձայնեցումը և շինթույլտվությունը կտրամադրվի տարաժամկետ վճարումները հանելուց հետո մեկ ամսվա ընթացքում, աջակցել այլ կազմակերպություններում (էլեկտրամատակարար, ջրմուղ-կոյուղի, գազամատակարար) տեխնիկական պայմանների տրամադրման հարցում
Բյուջետային պլանավորումը	2011-2012 թվականներին Երևան համայնքի բյուջեներում կապիտալի գործառույթներից մուտքեր
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը ՀՀ օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար

Գործարք 2. Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր

Պատվիրատուն	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ
Գլխավոր կապալառուն	Կազմակերպություն
Առարկան	Ավտոճանապարհի կառուցման աշխատանքներ, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ, նախագծի փորձաքննություն, հեղինակային հսկողություն, որակի տեխնիկական վերահսկողություն
Պայմանագրի ավարտման ժամկետը	2012 թվականի հոկտեմբերի 1-ը
Գինը	Հաստատուն I n1 I դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, ըստ կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքների կազմակերպության կողմից առաջարկվող ԱԱՀ-ն ներառող գնի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, փորձաքննության ծառայությունների ԱԱՀ-ն ներառող գնի,

	հեղինակային և շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց ԱԱՀ-ն ներառող վարձատրության գնի և ճանապարհի ուղեգծով անցնող 320 մմ տրամագծով գազատարի խողովակի տեղափոխման աշխատանքների ԱԱՀ-ն ներառող գնի հանրագումարի, որը հավասար է հողատարածքի տարաժամկետ վճարումով վաճառքի հիմնական պայմանագրերի գների հանրագումարին՝ I n I-ին: Հողամասերի արժեքի փոփոխությամբ պայմանավորված՝ այդ գների փոփոխության դեպքում կապալի պայմանագրի գինն ինքնաբերաբար հավասար է փոփոխված գների հանրագումարին
Գնի վճարման ժամկետը	Շինարարական կապալի պայմանագիրը կնքվում է հետևյալ պայմաններով՝ 1) շինարարական աշխատանքների ծավալի 30%-ը իրականացնելուց հետո, որը փաստագրվում է համապատասխան կատարողական ակտով, կազմակերպությունը վճարում է հողատարածքի (ամբողջ պայմանագրային գնի) 20%-ի արժեքը, որը Երևանի քաղաքապետարանն անմիջապես հետ է փոխանցում կազմակերպությանը՝ որպես վճարում շինարարական աշխատանքների դիմաց. 2) շինարարական աշխատանքների ծավալի ևս 40%-ը իրականացնելուց հետո, որը փաստագրվում է համապատասխան կատարողական ակտով, կազմակերպությունը վճարում է հողատարածքի (ամբողջ պայմանագրային գնի) 30%-ի արժեքը, որը Երևանի քաղաքապետարանն անմիջապես հետ է փոխանցում կազմակերպությանը՝ որպես վճարում շինարարական աշխատանքների դիմաց. 3) կապալի պայմանագրով նախատեսված շինարարության ավարտի փաստագրման ավարտական ակտի հաստատման օրվանից 10 օրվա ընթացքում հողատարածքի (ամբողջ պայմանագրային գնի) մնացած 50%-ի արժեքը կազմակերպությունը վճարում է, որը Երևանի քաղաքապետարանն անմիջապես հետ է փոխանցում կազմակերպությանը՝ որպես վճարում (վերջնահաշվարկ) շինարարական աշխատանքների դիմաց:
Օբյեկտի սեփականության իրավունքը	Երևան համայնքի սեփականություն
Իրականացման փուլը	Շինարարություն՝ կազմված նախագծահաշվարկային փաստաթղթերի հիման վրա
Թույլտվություններ	Պատվիրատուի համար՝ նախագծահաշվային փաստաթղթերի՝ սահմանված կարգով մշակում, փորձաքննություն, համաձայնեցում, շինարարության թույլտվություն, աջակցություն այլ կազմակերպություններում (էլեկտրամատակարար, ջրմուղ-կոյուղի, գազամատակարար) տեխնիկական պայմանների տրամադրման հարցում Գլխավոր կապալառուի համար՝ կապալի շինարարության լիցենզիա կամ լիցենզավորված

	ենթակապալառուի ներգրավում
Բյուջետային պլանավորումը	2011-2012 թվականներին Երևան համայնքի բյուջեներում կապիտալ շինարարության ծախսի պլանավորում
Կողմերի պատաս-խանատվությունը	Կողմերը ՀՀ օրենսդրության համաձայն պատասխանատվու-թյուն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ